



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

«25» հունվարի 2019 թ.

№ ԱԶ/36-Ա

Հ Ր Ա Մ Ա Ն

**Մ. ԴՈՒՐԳԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով, 3-րդ, 10-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 21-րդ կետի 3-րդ ենթակետով և հիմք ընդունելով ծառայողական քննություն անցկացնող աշխատանքային խմբի եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու և ծառայողական լիազորությունները վերազանցելու համար Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի գործերի կառավարման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետ Մարիանա Դուրգարյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ Ա. Վարդանյանին՝ սույն հրամանն իրագեկել ողջ անձնակազմին:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 1/25/2019 09:45:28 GMT+4

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Signed by: GEVORGIAN EDGAR 4010690054

Է. ԳԵՎՈՐԳՅԱՆ

